Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր N 1
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓԱԹԵԹԻ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ N 02706942-ԱՊ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

01/05/2025թ.

ՀՀ առողջապահության նախարարությունը (այսուհետ՝ Ապահովադիր)՝ ի դեմս **գլխավոր քարտուղար Վարդանուշ Գրիգորյանի** մի կողմից, **և «ՌԵԳՈ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերությունը** (այսուհետ՝ ապահովագրող)՝ (այսուհետ՝ ապահովագրող)՝ **ի դեմս գործադիր տնօրեն Արթուր Մկրտչյանի** մյուս կողմից, հետագայում երկու կողմերը միասին կանվանվեն «Կողմեր», կնքեցին 07/04/2025թ.-ին կնքված սոցիալական փաթեթի շահառուների առողջության ապահովագրության N 02706942-ԱՊ պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր) փոփոխություններ կատարելու վերաբերյալ սույն համաձայնագիրը՝ հետևյալի մասին.

1. Հիմք ընդունելով առողջապահության նախարարի 2025 թվականի ապրիլի 28-ի N 2568- Լ հրամանը՝ Պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները.
   1.1. Պայմանագրի N 2 Հավելվածում կատարել փոփոխություն՝ համաձայն N 1 հավելվածի:
   1.2. Սույն համաձայնագրի 1.1 կետով նախատեսված փոփոխություններով պայմանավորված՝
   1.2.1. Պայմանագրի 5.2 կետում «**54,600,000,000** ՀՀ դրամ» բառերը փոխարինել «**85 330 000 000 ՀՀ դրամ**» բառերով,

1.2.2 Պայմանագրի 6.2 կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ «2025 թվականի հաշվարկային պայմանագրային ընդհանուր գումարը կազմում է **186 662 236** ՀՀ դրամ:

1.2.3 Պայմանագրի 6.1 կետում 122.15 ՀՀ դրամ (ներառյալ կանխարգելիչ բժշկական քննությունը) և 103.23 ՀՀ դրամ (առանց կանխարգելիչ բժշկական քննության) բառերը փոխարինել 125.89 ՀՀ դրամ (ներառյալ կանխարգելիչ բժշկական քննությունը) և 106.44 ՀՀ դրամ (առանց կանխարգելիչ բժշկական քննության) բառերով:

Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում 01/01/2025թ. ժամը՝ 00:01-ին և ավարտվում 30/06/2025թ. ժամը՝ 23:59-ին:

2. Կողմերը, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներով, համաձայնում են, որ սույն համաձայնագիրը տարածվում է միմյանց միջև 2025թ.-ի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:
3. Սույն համաձայնագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է համաձայնագրի մեկ օրինակ:

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂ

«ՌԵԳՈ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ

Հասցե՝ ք. Երևան, 0014, Կոմիտաս 62, 93-93/1
Հեռ.՝ + 374 60 27 57 57
Էլ. փոստ՝ info@regoinsurance.am
Բանկ՝ «Յունիբանկ» ԲԲԸ

Բանկային հաշիվ՝ 24100024283401
ՀՎՀՀ՝ 02706942

Գործադիր տնօրեն
Արթուր Մկրտչյան

Digitally signed by MKRTCHYAN ARTUR 3714840176
Date: 2025.05.05 12:19:27 AMT

ԱՊԱՀՈՎԱԴԻՐ

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն

Հասցե՝ Երևան, Կառավարական տուն 3
Հեռ: +374 60 80-80-03
Էլ. փոստ՝ info@moh.am
Բանկ՝ ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Բանկային հաշիվ՝ 900011105013
ՀՎՀՀ 02507171

ՀՀ առողջապահության նախարարության գլխավոր քարտուղար՝ Վարդանուշ Գրիգորյան

GRIGORYAN VARDANUSH 6802780100

Digitally signed by GRIGORYAN VARDANUSH 6802780100
DN: cn=GRIGORYAN VARDANUSH 6802780100, c=AM
Date: 2025.05.07 15:48:43 +04'00'

Հավելված N 1
Սոցիալական փաթեթի շահառուների
առողջության ապահովագրության պայմանագրում
փոփոխություններ կատարելու վերաբերյալ
01/05/2025թ. կնքված համաձայնագրի

«Հավելված N 2
Սոցիալական փաթեթի շահառուների
առողջության ապահովագրության պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

(ՀՀ դրամ)

Ծրագրային դասիչ	Ծրագրի անվանումը	Վճարման ենթակա ապահովագրավճարի մասնաբաժինները և դրանց համապատասխան վերջնաժամկետները											
				մինչև 2025թ. ապրիլի 30-ը	մինչև 2025թ. Մայիսի 31-ը	մինչև 2025թ. Հունիս 30-ը							Ընդամենը տարի
1207- 11004	Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ			80 792 200	162 987 100	186 662 236							**186 662 236**

Ապահովագրող

(ստորագրությունը)

Digitally signed by MKRTCHYAN ARTUR 3714840176
Date: 2025.05.05 12:17:54 AMT

Ապահովադիր

(ստորագրությունը)

GRIGORYAN VARDANUSH 6802780100

Digitally signed by GRIGORYAN VARDANUSH 6802780100
DN: cn=GRIGORYAN VARDANUSH 6802780100, c=AM
Date: 2025.05.07 15:49:10 +04'00'